ճանաչել լուսանկարներում առկա քանդված շենքերը:

Գիտական նյութերից զատ՝ 2022 թ. «Վրաստանի ծնունդը» ծրագիրը[4], որն արդեն թողարկել է 150 դրվագ, կարող է օգտագործվել որպես շոշափելի աղբյուր: Ժամանակակից Վրաստանի ձևավորմանն անմիջականորեն մասնակցած անհատները տեսագրված ծավալուն հարցազրույցներում ներկայացնում են իրենց փորձառությունը: Իհարկե, հուշերը չեն կարող էմպիրիկ աղբյուր համարվել, քանի որ մասնակիցներն իրենց տեսանկյունից են պատմում պատմությունը: Սակայն պատումներ կառուցելով հնարավոր է զարգացնել քննադատական մտածողություն, ինչպես նաև իրադարձությունների վերաբերյալ բազմատեսանկյուն մոտեցմամբ պատկերացումներ ձեռք բերել:

Հղումներ

Toal, G. (2016) The Near Abroad: Putin, the West, and the Contest over Ukraine and the Caucasus. Oxford: Oxford University Press.

Chikovani, N., Kakitelashvili, K., Chkhaidze, I., Tsereteli, I. & Ephadze, K. (2022) Georgia: Trauma and Triumph on the Way to Independence. Tbilisi: Tbilisi State University Press.

Jones, S. (2013) Georgia: A Political History since Independence, Part 1: The Best of Times, the Worst of Times: 1985–1995. London: Bloomsbury Publishing.

4
Տե՛ս «Վրաստանի ծնունդը» յութուբյան ալիքը. https://www.youtube.com/@dabadeba (հասանելի է միայն վրացերեն), դիտվել է 2024 թ. փետրվարի 14-ին:

Դասապլան

Ազատություն, որը վերածվեց ողբերգության

Հեղինակներ	
ԼԼևան Բուկիա	*Թբիլիսիի թիվ 87 հանրակրթական դպրոց, Վրաստան*
Լելա Կակաշվիլի	*Գորիի թիվ 9 հանրակրթական դպրոց, Վրաստան*
Եկատերինա Մայսուրաձե	*Գորիի թիվ 12 հանրակրթական դպրոց և Թբիլիսիի թիվ 133 հանրակրթական դպրոց, Վրաստան*
Տամունա Մաճառաշվիլի	*Թբիլիսիի թիվ 77 հանրակրթական դպրոց, Վրաստան*
Գեորգի Լաբաձե	*«Պրոգրես» ամերիկյան միջազգային դպրոց, Թբիլիսի, Վրաստան*
Տարիք	17-18 տարեկան
Տևողություն	90 րոպե
Հիմնական հարց	Որքանո՞վ են 1991-1992 թթ. Թբիլիսիի պատերազմի իրադարձությունները շարունակում արդիական մնալ մեզ համար:

Ամփոփ նկարագրություն

Վրաստանի պետական հեղաշրջումը տեղի է ունեցել Վրաստանում 1991-1992 թթ.: Այս դասի ընթացքում սովորողները կկարդան հակամարտության վերաբերյալ վկայություններ իշխանական և ընդդիմադիր տեսանկյուններից, ինչպես նաև իրադարձությունների ականատես սովորական մարդկանց աչքերով կնայեն խնդրին: Աշխատելով ինչպես անհատապես, այնպես էլ խմբերով՝ նրանք կկարդան և կվերլուծեն ոչ միայն պատմական աղբյուրները, որոնք կօգնեն հասկանալու իրադարձություններն այնպես, ինչպես դրանք տեղի են ունեցել, այլև հակամարտության պատճառներն ու հետևանքները: Սովորողները կքննարկեն հակամարտության հետևանքով հասարակությունում տեղի ունեցած արժեքային փոփոխությունները և կգնահատեն, թե ինչպես է պատերազմն ազդել ու այսօր էլ շարունակում ազդել Վրաստանի հասարակության վրա:

Ուսումնական վերջնարդյունքներ

Սովորողը կկարողանա.

- Համեմատել և հակադրել սովորական թիֆլիսցիների վկայությունները հակամարտության վերաբերյալ:
- Վերլուծել պատմական աղբյուրները և բացահայտել վրաց հասարակության վրա պատերազմի թողած հիմնական ազդեցությունները:
- Օգտագործել տարբեր պատմական աղբյուրներ և դիտանկյուններ՝ պատմական իրադարձությունների վերաբերյալ իրենց կարծիքը հիմնավորելու համար:
- Քննարկել հակամարտության հետևանքով վրաց հասարակության փոփոխված և հաստատված արժեքները:

Գործողություններ

Փուլ I

Մտագրոհ 10 րոպե

Այս գործողության նպատակը սովորողների շրջանում թեմայի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելն է: Ուսուցիչն աշակերտներին ցույց է տալիս 1991 թ. նորություններից մի հատված (տե՛ս Հավելված I), ինչպես նաև Թբիլիսիի կենտրոնի քարտեզը գուգլ քարտեզներում՝ բացատրելով, որ հակամարտությունը սահմանափակվում էր Ռուսթավելու պողոտայով և շրջակա փողոցներով: Դասարանի կարիքներից կախված՝ ավելի լայն պատմական համատեքստը ներկայացնելու համար սովորողներին կարելի է նաև տրամադրել Թբիլիսիի պատերազմի հիմնական տարեթվերը (տե՛ս Հավելված IV):

Այնուհետև սովորողները պետք է պատասխանեն հետևյալ հարցերին.

- Ինչպե՞ս կարող է հակամարտությունն ազդած լինել Թբիլիսիի քաղաքացիական բնակչության վրա:
- Ի՞նչ եք կարծում, որքա՞ն լայնածավալ էր հակամարտությունը:
- Ըստ քարտեզի և տեսագրության՝ Թբիլիսիի ո՞ր փողոցների ու թաղամասերի վրա են ազդել մարտերը:

Փուլ II

Աղբյուրների վերլուծություն 45 րոպե

Այս գործողության նպատակը հակամարտության մասին տարբեր պատումներ վերլուծելու և դրանք համեմատելու արդյունքում խնդրի վերաբերյալ բազմատեսանկյուն կարծիք ձևավորելն է:

Սովորողները բաժանվում են 3 խմբի: 1-ին խումբն աշխատում է կառավարության կողմնակիցների աղբյուրների հետ, 2-րդ խումբը

վերլուծում է ընդդիմության կողմնակիցների տեսակետները, իսկ 3-րդ խումբը վերլուծում է ականատեսների վկայությունները (տե՛ս Հավելված II-ը աղբյուրների փաթեթների համար): Սովորողները պետք է պատասխանեն իրենց խմբին հանձնարարված հարցերին: 20 րոպե անց խմբերից յուրաքանչյուրը համառոտ ներկայացնում է իր աշխատանքը և բացահայտումները (5 րոպե՝ յուրաքանչյուր խմբի համար):

Խումբ 1

1. Համաձայն աղբյուրների՝ ինչպե՞ս է նախագահ Գամսախուրդիան գնահատում ընդդիմության գործողությունները:
2. Ի՞նչը ստիպեց Վրաստանի հասարակությանը երկու մասի բաժանվել: Ինչպե՞ս են կառավարության կողմնակիցները բացատրում այս երևույթը:
3. Ինչպե՞ս են կառավարության կողմնակիցները գնահատում քաղաքացիական հակամարտությունը:
4. Ո՞րն էր այս մարդկանց պատկերացրած լուծումը:

Խումբ 2

1. Ինչպե՞ս էին ընդդիմության կողմնակիցները տեսնում քաղաքացիական հակամարտությունը: Նրանց կարծիքով որո՞նք էին հակամարտության պատճառները:
2. Նրանց կարծիքով ո՞րն է լինելու հակամարտության հետևանքը: Ո՞րն է նրանց պատկերացրած լուծումը:
3. Ո՞րն է ընդդիմության հիմնական մեղադրանքը կառավարության դեմ:
4. Ձեր կարծիքով արդյո՞ք ընդդիմության փաստարկները բավարար էին զինված հակամարտության համար:

Խումբ 3

1. Ինչպե՞ս են ականատեսները գնահատում 1991-1992 թթ. իրադարձությունները:
2. Որո՞նք են այն ընդհանուր/հիմնական արժեքները, որոնց մասին հանրային դեմքերը խոսում են հակամարտությունից մի քանի տարի անց:
3. Ի՞նչ կարող են այս իրադարձությունները սովորեցնել մեզ: Ի՞նչ եզրակացություններ են թույլ տալիս կատարել աղբյուրները:
4. Ձեր կարծիքով հնարավո՞ր էր խուսափել այս հակամարտությունից, թե՞ այն անխուսափելի էր:

Փուլ III

Վեննի դիագրամ 10 րոպե

Ներկայացումներից հետո դասարանը լրացնում է Վեննի դիագրամը: Վեննի դիագրամի մի կողմում անհրաժեշտ է գրել կառավարության աջակիցների 2 կամ 3 դիրքորոշում, այսինքն՝ ռազմական գործողության դեմ փաստարկներ, մյուս կողմում՝ ընդդիմության աջակիցների 2 կամ 3 դիրքորոշում, որոնք արդարացնում են ռազմական գործողությունը: Կենտրոնում գրե՛ք հակամարտության վերաբերյալ այն տեսակետները/կարծիքները, որոնց երկու կողմերն էլ համամիտ են: Դիագրամը կօգնի համեմատելու հակամարտությունում ներգրավված կողմերի դիրքորոշումները:



Փուլ IV

Վրաստանի դպրոցական դասագրքերում քաղաքացիական պատերազմի ներկայացման վերլուծություն 15 րոպե

Սովորողներն անհատապես կարդում են հատվածներ վրացական դպրոցական դասագրքերից (տե՛ս Հավելված III) և փաստերն առանձնացնում են կարծիքներից (դրանք ընդգծում են տարբեր գույներով): Տասը րոպե անց նրանք փոքր խմբերում պետք է քննարկեն, թե տեքստերից որն է կողմնակալ և ինչու:

Փուլ V

Քննարկում 20 րոպե

Սովորողները դասարանում պետք է քննարկեն հետևյալ հարցերը.

1. Ինչպե՞ս կարող է հասարակությունը հաշտեցման ուղղությամբ քայլեր կատարել:
2. Երկրորդ փուլում ուսումնասիրված նյութերի հիման վրա կարո՞ղ եք ասել, որ հեղաշրջման շուրջ հաշտեցումը Վրաստանում հնարավոր է: Եթե այո, ինչո՞ւ, և եթե ոչ, ինչո՞ւ:
3. Որքանո՞վ են այսօր արդիական 1991-1992 թթ. իրադարձությունները մեզ համար:

Բառարան

Օգոստոսյան պուտչ – 1991 թ. օգոստոսի 19-ին ԽՍՀՄ նախագահ Միխայիլ Գորբաչովին տապալելու և Խորհրդային Միությունը պահպանելու անհաջող փորձ:

Բլինդաժ – ամուր կառույց, որը զինվորներին պաշտպանում է հրանոթային կրակից:

Գվարդիական – Վրաստանի Ազգային գվարդիայի անդամ, որոնք Թբիլիսիի պատերազմի ժամանակ կռվել են ընդդիմադիր ուժերի կողմից: Ինչպես երկրի մեծ մասը, Ազգային գվարդիան ևս պառակտված էր հակամարտության ժամանակ:

Մթածմինդա – փողոց և թաղամաս Թբիլիսիում:

Ազգային շարժում – 20-րդ դարի երկրորդ կեսի վրաց այլախոհական շարժում, որի նպատակը Վրաստանի՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալն ու անկախություն ձեռք բերելն էր:

Ռուսթավելու պողոտա – Թբիլիսիի հիմնական փողոցը:

Զվիադիստ – նախագահ Զվիադ Գամսախուրդիայի աջակիցներին տրված անունը:

Անձանց ցանկ

Բերիա, Լավրենտի (1899-1953) – Երկրորդ աշխարհամարտի տարիներին Ստալինի ենթակայությամբ գործող ՆԳԺԿ ղեկավար: 1930-ականներից ակտիվորեն մասնակցել է զանգվածային բռնաճնշումներին:

Գամսախուրդիա, Զվիադ (1939-93) – Վրաստանի առաջին նախագահը (1991-1992): 1989-ի վերջին մեծ ներդրում է ունեցել ԽՍՀՄ առաջին բազմակուսակցական ընտրությունների իրականացմանը: Մահացել է խորհրդավոր հանգամանքներում 1993 թ. դեկտեմբերի 31-ին: Հայտնի է նաև «Զվիադի» անունով:

Իոսելիանի, Ջաբա (1926-2003) – 1992 թ. հունվարի 6-ից մարտի 10-ը Վրաստանը ղեկավարած Ռազմական խորհրդի անդամ: Ռազմական խորհուրդն այնուհետև փոխարինվեց Էդուարդ Շևարդնաձեի գլխավորած Պետական խորհրդով: 1991 թ. Իոսելիանիի բանտարկությունը հանգեցրեց սեպտեմբերի 2-ի ցույցին (տե՛ս Հավելված IV. հիմնական տարեթվեր):

Կիտովանի, Թենգիզ (1938-2023) – 1992 թ. հունվարի 6-ից մարտի 10-ը Վրաստանը ղեկավարած Ռազմական խորհրդի անդամ: Ռազմական խորհուրդն այնուհետև փոխարինվեց Էդուարդ Շևարդնաձեի գլխավորած Պետական խորհրդով:

Օրջոնիկիձե, Սերգո (1886-1937) – Թբիլիսիի բանվորության շրջանում հեղափոխական պրոպագանդայում ներգրավված բոլշևիկ հեղափոխական: Ակտիվորեն մասնակցել է 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությանը և Ռուսական քաղաքացիական պատերազմի ժամանակ բոլշևիկների ներխուժմանը Կովկաս, ինչն անմիջականորեն հանգեցրեց Կովկասյան հանրապետությունների՝ Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի կլանմանը ԽՍՀՄ-ի կողմից: Համարվում է Վրաստանի դավաճան:

Սիգուա, Թենգիզ (1934-2020) – 1992 թ. հունվարի 6-ից մարտի 10-ը Վրաստանը ղեկավարած Ռազմական խորհրդի անդամ: Ռազմական խորհուրդն այնուհետև փոխարինվեց Էդուարդ Շևարդնաձեի գլխավորած Պետական խորհրդով, որի օրոք դարձավ վարչապետ:

Շևարդնաձե, Էդուարդ (1928-2014) – Խորհրդային Միության արտաքին գործերի նախարար 1985-1990 թթ.: Ղեկավարել է Վրաստանի կառավարությունը քաղաքացիական պատերազմի ժամանակ և Վրաստանի նախագահ է եղել 1995-2003 թթ.: Նրա օրոք Վրաստանը միացել է Անկախ պետությունների համագործակցությանը (ԱՊՀ):

Հավելված I

Աղբյուր

ABC News (1991) Թբիլիսի, Վրաստան, 24-ը դեկտեմբերի, https://youtu.be/Mg5dIAecq0g?si=y6ZTJeBjCD_hSwaF, դիտվել է 2024 թ. փետրվարին 6-ին:

Տեսագրության սղագրություն

Մինչ Խորհրդային Վրաստանում ապստամբական ուժերը ռմբակոծում էին Խորհրդարանի շենքը հանրապետության ժողովրդավարական ճանապարհով ընտրված առաջնորդին տապալելու անողոք մղումով, նախագահ Գամսախուրդիան դիմում էր Արևմուտքին՝ աջակցություն խնդրելով, իր լեզվով ասած, «ահաբեկիչների» դեմ կռվելու համար: Առնվազն 30 մարդ մահացել է, ավելի քան 250-ը վիրավոր է: Շեյլա Կաստը մայրաքաղաք Թբիլիսիում է:

Ապստամբներն օգտագործում են ամեն տեսակի զենք, որ կարող են ձեռք բերել՝ հարձակվելու նրա վրա, ինչը վերածվել է նախագահ Գամսախուրդիայի բունկերի: Նրանք օգտագործում են ամեն բան՝ AK-47-երից, փոքր հրացաններից մինչև զրահամեքենաներից հանված ատրճանակներ: Ապստամբները զինամթերքով լավ են ապահովված: Նրանց գնդակոծությունն անողոք է և միայն նախագահի աջակիցների դիպուկահարների հատուկենտ կրակին է արժանանում: Ժամանակավոր շտաբից ապստամբները տեղափոխվել են զբոսաշրջիկների հյուրանոց, Կառավարության շենքի դիմացի փողոցը դարձել է «ոչ ոքի տարածք»:

Իշխանության համար կռիվն ընթանում է միայն այս պողոտայում, որը մայրաքաղաքի հիմնական փողոցն է: Քաղաքի և հանրապետության մյուս մասերում կյանքն ընթանում է նորմալ հունով: Թբիլիսիի բնակիչները, իրականությունից կտրված, զարմանքով նայում են գնդակոծությանը: Ընդամենը նախորդ մայիսի ազատ ընտրություններին ճնշող մեծամասնությունը քվեարկել է Գամսախուրդիայի օգտին, և շատերը համաձայն չեն ընդդիմության մեղադրանքին, թե նա բռնապետ է դարձել: Միայն մի քանի հարյուր մարդ է զինված պայքարի դուրս եկել այս կամ այն կողմում:

«Սա պուտչ է, քաղաքացիական պատերազմ չէ, դեռ...»: Սակայն բնակիչներն անհանգիստ են, որ այն կարող է քաղաքացիական պատերազմի վերածվել: Այս հակամարտության երկու կողմերն էլ ուզում էին անկախանալ հին խորհրդային պետությունից, սակայն այժմ ոչ մի նշան չկա, որ հնարավոր է դուրս գալ նախագահի ուժերի և ապստամբների փակուղուց, որտեղ նախագահը պնդում է, որ ավտորիտար կառավարումը նոր ժողովրդավարություն հիմնելու միակ ճանապարհն է, իսկ ապստամբները ժողովրդավարության նրա տարբերակը համարում են իրենց ազատությունների թշնամի:

Աղբյուրների փաթեթներ

Խումբ 1 Կառավարության կողմնակիցներ

Աղբյուր Ա

Վրացիները բարիկադների տարբեր կողմերում

Կառավարության շենքի մոտակայքում. նախագահի պաշտպանությանն ուղղված ցույցերն ու ակցիաները շարունակվում են այստեղ: Հանրապետության տարբեր շրջանների աշխատավորների հոսքը շարունակվում է, գալիս են տարբեր քաղաքների գործարանների բանվորներ... «Մենք այստեղ ենք՝ պաշտպանելու մեր նախագահին»,- մեզ հայտնեց Ռոբերտ Ուգուլավան: «Ումի՞ց, վրացիների՞ց»,- մենք հարցրինք: «Թե՛ Օրջոնիկիձեն, թե՛ Բերիան վրացի էին, սակայն չե՞ք հիշում, թե նրանք ինչ արեցին»: «Ձեր բոլոր ընդդիմախոսները Բերիայի և Օրջոնիկիձեի նմա՞ն են»: «Դրա մասին չգիտեմ, սակայն երբ Վրաստանը մի քայլ է հեռու անկախությունից, նախագահի դեմ կազմակերպված ցանկացած քայլ նման է Օրջոնիկիձեի գործողություններին»: Լրագրող Էթեր Մճեդելիանին ասաց. «Մենք աջակցում ենք մեր նախագահին, աջակցում ենք, ոչ թե պաշտպանում: Զվիադ Գամսախուրդիան մեր պաշտպանության կարիքը չունի, մենք պաշտպանում ենք Վրաստանի ապագան»:

Աղբյուր

Կանդելակի, Է. (1991) «Վրացիները բարիկադների տարբեր կողմերում», Akhalgazrda Iverieli, 21-ը սեպտեմբերի, N107-108, էջ 5:

Աղբյուր Բ

«Ժողովրդավարությունն անարխիա չէ»

Արդյո՞ք հանրաքվեն չանցկացվեց Վրաստանի անկախությունը վերականգնելու համար: Նախագահը ստացավ ձայների մեծ մասը. արդյո՞ք սա, ինչպես նաև ընդդիմադիր թերթերում հրապարակվող կառավարությանը քննադատող հոդվածները իրական ժողովրդավարության ուղղությամբ քայլեր չեն ներկայացնում: Ինչ վերաբերում է հանրապետության նախագահին, սեպտեմբերյան նորությունները կրկին հաստատեցին, որ նա չափազանց ազատական է: Լավ, ո՞ր երկրի ղեկավարը կհանդուրժեր զինված ընդդիմության նման դրսևորում: Միևնույն ժամանակ, համաշխարհային հանրության աչքում Գամսախուրդիային բռնապետ անվանելն ընդդիմությանը և Վրաստանին առհասարակ լավ արդյունքներ չի բերի:

Աղբյուր

Թոդուա, Թ. (1991) «Ժողովրդավարությունն անարխիա չէ», Akhalgazrda Iverieli, 5-ը հոկտեմբերի, N 113-114, էջ 4:

Աղբյուր Գ

Երեք հարյուր ընտրողների մի խումբ

Վերջին մի քանի օրերին երեք հարյուր ընտրողների մի խումբ (ստորագրահավաքը շարունակվում է) թերթերի և հեռուստատեսության միջոցով Վրաստանի նախագահին համառորեն հորդորում է անմիջապես ցրել խորհրդարանը և հանրապետությունում նախագահական կարգ հաստատել: Մենք հարցրել ենք. «Դուք օժանդակո՞ւմ եք այս կոչին, թե՞ ոչ»: Բժիշկ Գելա Ռոինիշվիլին ասաց. «Կարծում եմ, Զվիադ Գամսախուրդիան անգամ իշխանությունն ամբողջությամբ վերցնելուց հետո չի մոռանա հիմնականը. Վրաստանի ճակատագիրն անմիջականորեն կախված է լինելու իր արարքներից: Եվ կապ չունի, թե ուրիշներն ինչ են ասում, Զվիադն ավելի շատ է սիրում Վրաստանը, քան որևէ մեկը»:

Աղբյուր:

Akhalgazrda Iverieli (1991), 12-ը հոկտեմբերի, N 115-117, էջ 5:

Աղբյուր Դ

«Ցույցերը շարունակվում են, լարումը մեծանում է»

Սեպտեմբերի 7-ին՝ երեկոյան ժամը 5-ին, Ռուսթավելու պողոտայում՝ Կառավարության շենքի դիմաց, բազմամարդ միտինգ էր կազմակերպված: Հանրապետության նախագահ Զվիադ Գամսախուրդիան ցույցի ժամանակ ելույթով հանդես եկավ: Իր ելույթում նա ասաց, որ Վրաստանում քաղաքական ապակայունացում առաջացրել են թշնամական ուժերը, որոնք վերահսկվում են Մոսկվայից: Մոսկվան Վրաստանի անկախությունն ու ազատությունը չի կամենում և փորձում է ցանկացած ճանապարհով կասեցնել վերջինիս միջազգային ճանաչումը: Այստեղ դավաճաններն ու թշնամիները թշնամու ջրաղացին ջուր են լցնում, հայտարարեց նախագահը: Նա ցուցարարներին և ամբողջ Վրաստանին կոչ արեց անողոքաբար պայքարելու և ոչնչացնելու Վրաստանի թշնամիներին ու դավաճաններին:

Աղբյուր

Կորիձե, Թ. (1991) «Ցույցերը շարունակվում են, լարումը մեծանում է», Droni, 13-ը սեպտեմբերի, N 35(51), էջ 1:

Խումբ 2 Ընդդիմության կողմնակիցներ

Աղբյուր Ա

Աղբյուր

Կանդելակի, Է. (1991) «Վրացիները բարիկադների տարբեր կողմերում», Akhalgazrda Iverieli, 21-ը սեպտեմբերի, N 107-108, էջ 5:

Վրացիները բարիկադների տարբեր կողմերում

Հայրս մեծացել է Ստալինի և Բերիայի մասին երգերով: Չեմ ուզում, որ երեխաներս մեծանան Զվիադի իշխանության տակ, դա ևս մեկ անգամ կապացուցի մեր ստրկական բնույթը: Ես միշտ անսահման հպարտ կլինեմ Զվիադ Գամսախուրդիայով, որը մեծ ծառայություններ է մատուցել Վրաստանին և վրաց ժողովրդին: Նա հիանալի գործ արեց՝ քանդելով կոմունիստական համակարգը, սակայն ընդունակ քանդողը միշտ չէ, որ լավ կառուցող է:

Աղբյուր Բ

Հանրապետության հրապարակ, 27-ը դեկտեմբերի, 1991 թ.

Աղբյուր

Կիզիրիա, Դ. (2018) Պուտչը: Թբիլիսի. «Արթանուջ» հրատարակչություն, էջ 100:

«Գիտեք, հասել ենք մի կետի, երբ խնդիրն այլևս չի լուծվի քաղաքական բանակցություններով և այլ նման խաղաղ միջոցներով: Սա լուծելու, ավարտին հասցնելու միակ ճանապարհը զենքով է: Զվիադ Գամսախուրդիան սեփական ազատ կամքով հրաժարական չի տա: Բոլոր միջոցներն արդեն սպառվել են. սովորական, խաղաղ, դիվանագիտական, կամ, եթե կուզեք, ընդդիմադիր պայքարը. սպառվել են»,- անանուն քաղաքացի:

Աղբյուր Գ

«Ցույցերը շարունակվում են, լարումը մեծանում է»

Աղբյուր

Կորիձե, Թ. (1991) «Ցույցերը շարունակվում են, լարումը մեծանում է», Droni, 13-ը սեպտեմբերի, N 35(51), էջ 1:

Սեպտեմբերի 7-ին Ռուսթավելու պողոտայում՝ Թատերական ինստիտուտի դիմաց [ներկայում՝ Թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ], կազմակերպվել էր ցույց Վրաստանի ազգային ժողովրդավարական կուսակցության նախաձեռնությամբ: Ցուցարարները դատապարտում էին կառավարության գործողությունները և պահանջում նախագահ Գամսախուրդիայի հրաժարականը՝ պատճառաբանելով, որ նա Վրաստանը տանում է դեպի բռնապետություն և ամբողջատիրություն, և նշելով, որ քանի դեռ Վրաստանի կառավարությունն իրականացնում է հակաժողովրդավարական, հակաժողովրդական քաղաքականություններ, Վրաստանը միջազգային ճանաչման չի արժանանա:

Աղբյուր Դ

Քաղաքական լճացում

Ինչպես երկիրն առհասարակ, հակամարտության ժամանակ Վրացական Ազգային գվարդիան նույնպես բաժանված էր երկու մասի՝ նախագահամետ խմբակցություն և Կիտովանիի կողմնակիցների ընդդիմություն, որոնք բանակել էին Հեռուստատեսության և ռադիոյի պետական վարչության մոտակայքում:

Հակադիր կողմերից յուրաքանչյուրն ունի իր «տաբու» խնդիրները, որոնք բարձրաձայնելը, առնվազն որոշ ժամանակ, ինքնաբերաբար բացառում է ցանկացած բանակցություն: Իշխանությունների համար սա նախագահի հրաժարականի պահանջն է, իսկ ընդդիմության համար՝ պետական հեռուստառադիոյի դեպարտամենտի [ներկայում՝ Վրաստանի

Աղբյուր

Ճոճիշվիլի, Գ. (1991) «Քաղաքական լճացում», Droni, 4-ը հոկտեմբերի, N 38(41):

հանրային հեռարձակող] շենքի մոտ բանակած գվարդիականների զինաթափումը: Նրանց կարծիքով գվարդիականների զինաթափմանն անկասկած կհաջորդի բռնաճնշումը: Ավելին՝ այդտեղի գվարդիականները պնդում են, որ ոչ թե Նախագահի պահակազորը, այլ իրենք են իրական Ազգային պահակազորը: Ուստի այս երկու առաջարկությունների ներկայացումը ժամանակի կորուստ է:

Աղբյուր Ե

Վրաստանի ազգային անկախության կուսակցության հայտարարությունը Վրաստանի իրավիճակի կապակցությամբ

[...] հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վրաստանում հաստատվել է անբարոյականության և համընդհանուր ատելության վրա հիմնված ավտորիտար-բռնապետական ռեժիմ՝ Զվիադ Գամսախուրդիայի քրեական կառավարության տեսքով ... հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վրաստանը դեռևս բախվում է Խորհրդային Ռուսական Կայսրության ագրեսիային, որն այն բռնակցել և շարունակում է օկուպացված պահել ... հաշվի առնելով այն հանգամանքը, որ 1991 թ. սեպտեմբերի 2-ին կառավարությունը բարբարոսաբար ցրեց խաղաղ հանրահավաքը և կրակ բացեց ցուցարարների վրա՝ այդպիսով սեփական ժողովրդի դեմ հանցանք գործելով ... այս ամենը հաշվի առնելով՝ Վրաստանի ազգային անկախության կուսակցությունը, որպես Վրաստանում գերիշխող ընդհանուր անարդարության դեմ բողոքի նշան, սկսում է անժամկետ խաղաղ գործադուլ՝ հետևյալ պահանջներով.

1. Զվիադ Գամսախուրդիայի հրաժարականը նախագահի պաշտոնից և Նախագահի ինստիտուտի վերացումը նախքան Վրաստանի անկախության պաշտոնական հռչակումը:
2. Վրաստանի անջատումը ԽՍՀՄ-ից և դեռևս Վրաստանի տարածքում գտնվող օկուպացիոն բանակի ամբողջական դուրսբերումը:
3. Անսահմանափակ խոսքի ազատության, ազատ մամուլի, հեռուստատեսության և զանգվածային լրատվամիջոցների երաշխավորում:
4. Քրեական գործի հարուցում 1991 թ. սեպտեմբերի 2-ի հանրահավաքը ցրած ուժերի դեմ:

Աղբյուր

«Վրաստանի ազգային անկախության կուսակցության հայտարարությունը Վրաստանի իրավիճակի կապակցությամբ», Droeba, սեպտեմբեր, 1991, N 25:

Խումբ 3 Ականատեսների (հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչներ) պատմություններ

Աղբյուր Ա

Պաատա Բուխրաշվիլի, Իլիա պետական համալսարանի պրոֆեսոր, պատմաբան

«Ես Ազգային շարժման ձևավորման անմիջական ականատեսն եմ եղել: Արդեն ակտիվորեն ներգրավված էի և բավականին գիտակցաբար մասնակցում էի բողոքի ցույցերին: Քաղաքականորեն կողմնակալ չեմ, սակայն ազդեցության ենթարկված վրաց ազգի ներկայացուցիչ եմ: Վրաստանի այն ժամանակվա նախագահ Զվիադ Գամսախուրդիայի նախաձեռնությամբ հայտարարվել էր պետական ունեցվածքի ապազգայնացում, և գործընթացը պետք է սկսվեր, և Շրջկոմի [խորհրդային շրջանի կուսակցության տեղական կոմիտե] քարտուղարները բարկացած էին այդ կապակցությամբ: Բացի այդ՝ Վրաստանը բավականին զարգացած երկիր էր՝ իր ծանր և թեթև արդյունաբերությամբ ու գործարաններով, Բաթումում և Փոթիում նավաշինարաններ կային: Փոթին մի ունիկալ սուզանավ էր թողարկել: Կային մեքենաշինական և տանկեր արտադրող գործարաններ, որոնք երկրում տնտեսական հարստություն էին ստեղծում: Վրաստանը Միությունը լքում էր կազմակերպված տնտեսությամբ, այս ամենը չէր համապատասխանում Ռուսաստանի շահերին, և Վրաստանի շրջանային կոմիտեների քարտուղարները պաշտպանում էին Ռուսաստանի շահերը: Նրանք ցանկանում էին պահել իրենց ունեցած արտոնությունները: Գործարանների տնօրեններն իրենց վերջին տնօրեններն էին համարում և այս պատճառով գործարաններն իրենցը հայտարարեցին: Ազգային կառավարության տապալման վերջնական նպատակը Վրաստանի՝ ռուսական տնտեսության ազդեցությունից ազատվելը կասեցնելն էր, և արդյունքն ակնհայտ է. Վրաստանն այժմ կապված է ռուսական տնտեսությանը: Ես այս հեղաշրջումն անվանում եմ ռուսական օպերացիա: Ես դեռ ողջ եմ, բայց ինձ թվում է, որ իսկապես ապրել եմ միայն այդ երեք տարիներին՝ 1988-ի նոյեմբերից 1991-ի դեկտեմբերը»:

Աղբյուր

Պաատա Բուխրաշվիլի (2023), հարցազրույցն անցկացրել են Լելա Կակաշվիլին և Թամունա Մաճառաշվիլին օգոստոսի 14-ին Թբիլիսիում, Վրաստան:

Աղբյուր Բ

Թամազ Մակաշվիլի, պաշտոնյա Գորիից

«Քաղաքացիական պատերազմը ծագեց Ազգային շարժման պառակտման հետևանքով: Վրաստանի բնակչության մի մասը հետևեց Ազգային շարժման մի կողմին, մյուս մասը հայտնվեց այլ կողմում: Նախագահ Զվիադ Գամսախուրդիայի կառավարման շատ թերություններ ի հայտ եկան այդ մեկ տարում [1991]: Պառակտում կար Գամսախուրդիայի թիմում: Վարչապետ Թենգիզ Սիգուան և պաշտպանության նախարար Թենգիզ Կիտովանին դեմ էին նրան: Նրանք քաղաքացիական պատերազմ սկսեցին: 1991 թ. դեկտեմբերի 22-ին արձակվեց առաջին փամփուշտը: Այս պահին քննարկվում է, թե որ կողմն այն կրակեց, սակայն դա չի կարող որոշիչ նշանակություն ունենալ: Այն ժամանակ բնակչության մեծամասնությունը Զվիադ Գամսախուրդիային չէր աջակցում և ընդդիմության կողմից էր: Ռազմական գործողությունների հետևանքով կառավարությունը տապալվեց, և նախագահը փախավ Չեչնիա: Թվում էր, թե Զվիադ Գամսախուրդիայի մահով վեճն ավարտվեց, սակայն հասարակությունը

պառակտված մնաց. ընտանիքները բաժանված էին զվիադիստների և ոչ-զվիադիստների: Սրանք մեր ժողովրդի պատմության ամենաբարդ, ամոթալի էջերն են: Այդ ժամանակ մամուլի ազատությունը սահմանափակված էր, և ազգային փոքրամասնությունների խնդիրը սուր էր: Ընդդիմության խաղաղ հանրահավաքները ցրվեցին բռնի ուժով. հիշում եմ, հրշեջ մեքենան մխրճվեց ուղիղ ցուցարարների շարքերը: Սակայն ընդդիմությունը նույնպես շատ սխալներ թույլ տվեց: Հիմնական սխալն այն էր, որ այս ամենը հանգեցրեց քաղաքացիական պատերազմի: Ընդդիմությունն արագ իշխանափոխություն էր ուզում, բայց պետք է սպասեինք առնվազն մինչև ընտրությունները»:

Աղբյուր

Թամազ Մակաշվիլի (2023), հարցազրույցն անցկացրել են Լելա Կակաշվիլին և Թամունա Մաճառաշվիլին օգոստոսի 13-ին առցանց:

Աղբյուր Գ

Էկա Մարգվելանի, ուսուցիչ

«Այն ժամանակ ես դպրոցական էի և հիշում եմ մթնոլորտը: Այդ պահին չէի կարողանում հասկանալ փաստերը՝ ինչ էր տեղի ունենում և ինչու, բայց ամեն դեպքում, երբ մի վատ բան էր կատարվում, նկատում էին բոլորը՝ ինչպես երիտասարդները, այնպես էլ տարեցները: Որոշ բացառություններ չհաշված՝ այն ժամանակվա էլիտայի մեծ մասը՝ հայտնի ռեժիսորներ, դերասաններ և հեռուստահաղորդավարներ, հայտնվեցին ընդդիմադիր ճամբարում: Սովորական մարդիկ չէին ուզում կառավարությունը փոխել նման արմատական ճանապարհով: Անախորժությունների լուրերը համընկան ձմեռային արձակուրդի հետ: Ես արդեն Արևմտյան Վրաստանում էի, և մենք Ռուսթավելիի իրադարձություններին հետևում էինք հեռուստացույցով: Չէի կարողանում հավատալ, որ քաղաքի կենտրոնում իրական պատերազմ էր ընթանում վրացիների միջև, այնպիսին, ինչպիսին տեսել էի ֆիլմերում՝ զենքերով, հրացանի մարտկոցներով, գնդացիրներով... Հիշում եմ, որ ավելի ուշ Թբիլիսի վերադարձանք, երբ ամեն բան արդեն ավարտվել էր: Եվ երբ Ռուսթավելիին առաջին անգամ ավերակների մեջ տեսա, վերջապես հասկացա, որ այս պատմությունն իսկապես տեղի էր ունեցել այստեղ: Ամեն բան ավերված էր, շենքերն ավերված էին: Մի քանի տարի շարունակ ամեն ինչ այնքան գորշ էր: Տարածքը մաքրվել էր, սակայն շենքերը երկար ժամանակ չէին վերականգնվել, և ամեն անգամ այդտեղով անցնելիս ես մտածում էի, թե երբ կվերակառուցեն, արդյո՞ք չպետք է կրկին կառուցեն, որ այլևս այսպես չլինի, որովհետև դա ինձ հիշեցնում էր պատերազմի շրջանը... Այդ իրադարձություններն անձամբ իմ մեջ վախ են թողել, և երբ այսօր բողոքի ցույցեր են լինում, անկախ այն բանից, թե որքան խաղաղ են, ես դեռ վախենում եմ, որ նույնը տեղի կունենա, որ կրկին կսկսեն կրակել...»:

Աղբյուր

Էկա Մարգվելանի (2023), հարցազրույցն անցկացրել է Թամունա Մաճառաշվիլին օգոստոսի 15-ին Թբիլիսիում, Վրաստան:

Աղբյուր Դ

Նուգզար, ականատես

«Թբիլիսիի պատերազմը կարող է կոչվել «Մթածմինդայի պատերազմ», քանի որ քաղաքի այլ վայրերում նորմալ կյանքը շարունակվում էր, և Դեզերտեր բազարում (շուկա Թբիլիսիում) ամանորյա առևտուրը եռում էր: Առաջին օրերին ես նստում էի տանը և շարունակ դուրս նայում Բեսիկ փողոցին նայող բնակարանիս պատշգամբից: Առաջին օրերին նրանք բնակելի տների վրա չէին կրակում: Սա այն բանից հետո, երբ փամփուշտների կարկուտ էր տեղում, և Կառավարության շենքի հարակից

տարածքում չվնասված շինություն չէր մնացել: Մեր ձեղնահարկը մի քանի անգամ հրդեհվել է, և հարևանները հանգցրել են հրդեհը: Հրշեջները դադարել էին կանչերին արձագանքելուց. ոմանք կրակում էին նրանց վրա, որպեսզի հրդեհը մի քիչ ավելի երկար շարունակվեր: Տանը կոտրվել էին լուսամուտների ապակիները, պատշգամբի դուռը: Միայն արտաքին հիմնական հսկա պատն էր պաշտպանված փամփուշտներից, և հենց այս պատի հետևում՝ սենյակի անկյունում, ես բլինդաժ սարքեցի՝ ներքնակ դրեցի հատակին, տեղափոխեցի հեռուստացույցն ու գրքերը… Չնայած գնդացիրների անդադար գնդակոծությանը՝ զոհերը դեռևս քիչ էին, քանի որ կողմերից ոչ մեկը թիրախին չէր կրակում: Բեսիկ փողոցի անկյունում՝ փռի մոտ, երեք գվարդիականներ էին կանգնած: Ես խոսեցի նրանց հետ, պարզվեց՝ Գորիից են: Նրանցից մեկը մի վայրկյանով հեռացավ պատից, ծնկի իջավ և մի քանի անգամ կրակեց Կառավարության շենքի ուղղությամբ Ձմբեթի Ձուբալաշվիլեբի փողոցի անկյունից: «Ինչ-որ մեկին կպա՞ր»,- հարցրեց մյուսը: «Ո՛չ, փա՛ռք Աստծո, մինչև հիմա ոչ մեկին չեմ կպել»: Պատերազմը, որը երկար ժամանակով որոշեց Վրաստանի ճակատագիրը, և որին մինչև հիմա երկչոտ կոչում են «1991-1992 թթ. իրադարձություններ» Թբիլիսիում, տեղի է ունեցել ընդհանուր առմամբ 2-3 քառակուսի կիլոմետրի վրա՝ Ձամելի փողոցից մինչև Սոլոլակի: Եվ քաղաքի բնակչության մի փոքր մասը, որն ամանորյա նախապատրաստության թոհուբոհում դեռ հետաքրքրված էր, թե ինչ է կատարվում, ամենաշատը մինչև Ձամելի փողոց էին մոտենում՝ տեսնելու, թե ինչ է կատարվում: Նրանք գալիս էին տեսնելու բառացիորեն պատերազմի թատերաբեմը:

Աղբյուր Ե

Դաթո Տուրաշվիլի, արձակագիր

«Չկա այնպիսի հիմնախնդիր, որը բավարար պատճառ լիներ ժողովրդավարական ճանապարհով ընտրված կառավարության դեմ զինված պայքարի դուրս գալու համար: Այդ պատճառով, կարծում եմ, այդ բռնությանն արդարացում չկար, և մենք մինչ օրս դառնորեն քաղում ենք այդ անուղղելի սխալի հետևանքները… Մենք նաև համալսարանի բակում հանրահավաք կազմակերպեցինք և այդտեղ պարզեցինք, որ շատերն իսկապես Վրաստանում պատերազմ էին ուզում: Երբ սկսեցինք խոսել խաղաղության և պատերազմն անմիջապես դադարեցնելու մասին, հանրահավաքին եկած մարդիկ անմիջապես մեր դեմ դուրս եկան: Համալսարանի դիմաց միայն մի քանի մարդ մնաց, և Գիա Աբեսաձեն մեզնից անձնազոհն էր: Նա շատ հանրայնորեն ինքն իրեն այրեց Ռուսթավելու պողոտայում՝ ի նշան բողոքի սպանելով իրեն: Վստահ չեմ, որ որևէ այլ քաղաքացիական պատերազմ որևէ այլ երկրում նման զոհ է ունեցել… Սակայն դասական առումով Թբիլիսիի պատերազմը քաղաքացիական պատերազմ չէր: Դասական առումով այն ավելի շուտ ապստամբություն կամ հեղափոխություն էր: Այն ավելի շուտ հեղաշրջում էր, բայց միայն Թբիլիսիում: Ռուսթավելու պողոտայում կռիվ էր ընթանում, իսկ ոչ շատ հեռու՝ գրեթե հարևան թաղամասերում, մարդիկ այլ կյանքով էին ապրում: Բայց անգամ նրանք դեռ գալիս էին Ռուսթավելի՝ իրական պատերազմ տեսնելու: Թբիլիսիի պատերազմն ավելի շատ հանդիսատես ուներ, քան մասնակից… Միջազգային դրությունը ճիշտ այնպիսին էր, ինչպիսին միշտ է, երբ դու ինքդ քանդում ես քո երկիրը և հետո սպասում ուրիշների օգնությանը»:

Աղբյուր

Տուրաշվիլի, Դ. (2012) Մի անգամ 1987-1991-ին, Թբիլիսի. «Բակուր Սուլաքաուրի» հրատարակչություն:

Աղբյուր

Գաչեչիլաձե, Գ. (2017) «Մի մարդու հուշերը Թբիլիսիի պատերազմի մասին», Ամբեթի, 16-ը սեպտեմբերի, http://tinyurl.com/yc3upu7h, դիտվել է 2023 թ. փետրվարի 12-ին:

Աղբյուր Զ

Լևան Բերձենիշվիլի, գրող, նախկին այլախոհ, ընդդիմության կողմնակից

«Ցավոք, նրա նախագահության օրոք քաղաքացիական պատերազմ եղավ: Հասարակությունը պառակտվեց, և մի մասի մեջ խիստ բացասական վերաբերմունք ձևավորվեց Ձվիադ Գամսախուրդիայի նկատմամբ: Սակայն ես վստահ եմ, որ պատմությունը բարի կլինի Ձվիադ Գամսախուրդիայի հանդեպ: Իհարկե, նրա սխալները չեն մոռանա, չեն մոռանա, որ նրա օրոք քաղաքացիական առճակատում եղավ, որի դեպքում հնարավոր չէ, որ կողմերից որևէ մեկն անմեղ լինի… Ձվիադ Գամսախուրդիայի համար «Վրաստանի անկախությունը ռազմաճակատ և կենտրոն էր»: Նա տարված էր այս մեկ գաղափարով, և դա նրան խանգարում էր տեսնելու դեպի այդ գաղափար տանող ճանապարհները. նախ՝ ազատություն, ապա՝ անկախություն, նախ՝ մարդու իրավունքներ, ապա՝ անկախություն և այլն: Վրաստանը նրա համար ավելի կարևոր էր, քան որևէ այլ բան, և Վրաստանի անկախության գաղափարը նրա մտքից ջնջեց բոլոր մյուս գաղափարները»:

Աղբյուր

Բերձենիշվիլի, Լ. (2022) Մի մարդու և երկրի պատմություն, Թբիլիսի. «Արթանուջի» հրատարակչություն:

Աղբյուր Է

Ռևազ Միշվելաձե, գրող, ընդդիմության կողմնակից

«Պարզվում է՝ ես իսկապես զարմանահրաշ ժամանակներում եմ ապրում: Տասներկու օր շարունակ վրացիների միջև իսկական պատերազմ է եղել Թբիլիսիում: Գուցե այս օպերացիան Մոսկվա՞ն է կառավարում: Շուրջ 300 մարդ սպանվել է, և շուրջ 500-ը՝ վիրավորվել: Ռուսթավելու պողոտայի բոլոր գեղեցիկ շենքերը քանդվել են: Բանկը, Թիվ 1 դպրոցը, «Թբիլիսի» հյուրանոցը և Նկարիչների տունն այրվել են: Ընդդիմությունը Ձվիադ Գամսախուրդիայի հրաժարականն է պահանջում: Ձվիադը համառորեն կառչում է նախագահի աթոռից: Վրաստանը մահանում է: Մեղավորն ընդդիմությունն է: Պատմությունը կարդարացնի Ձվիադին՝ անկախ նրա սխալներից»:

Աղբյուր

Միշվելաձե, Մ. (2013) Քսանհինգ կատաղած տարի, Թբիլիսի. «Պալիտրա Լ» հրատարակչություն:

Քաղաքացիական պատերազմի ներկայացումը վրացական դպրոցական դասագրքերում

Աղբյուր Ա

«Վրաստանի պատմություն», 11-րդ դասարանի դասագիրք

Անկախ պետությունների համագործակցությունը ստեղծվել է առանց Վրաստանի: Ռուսաստանը չկարողացավ համոզել Վրաստանի ազգային կառավարությանը փոխզիջման գնալ: Ակնհայտորեն, ԱՊՀ-ի ստեղծումից հետո ԽՍՀՄ իրավահաջորդ Ռուսաստանը Վրաստանի ազգային կառավարության հանդեպ բարի կամք չէր դրսևորում: Սա նշանակում էր, որ Վրաստանի կառավարությունը չէր ստանա ԱՊՀ աջակցությունը: Արտաքին բարդությունները նշան եղան, որ Վրաստանի կառավարության ընդդիմությունը կրկին երևան գա: Ընդդիմությունը պետք է ավելի ակտիվ լիներ, նախքան աշխարհի երկրները կճանաչեին Վրաստանի անկախությունը, քանի որ ճանաչումը միայն կուժեղացներ Զվիադ Գամսախուրդիայի կառավարությանը: 1991 թ. դեկտեմբերի 22-ին Թբիլիսիում զինված ընդդիմություն սկսվեց, որը ոգեշնչվել էր Ռուսաստանի համագործակցությամբ և գործնական աջակցությամբ: 1991 թ. դեկտեմբերի վերջից մինչև 1992 թ. հունվարի վերջը մայրաքաղաքում մարտեր էին ընթանում, որոնց հետևանքով ընդդիմությունը (պուտչիստները) տապալեց օրինական իշխանությանը: Նախագահ Զվիադ Գամսախուրդիան Գերագույն խորհրդի և կառավարության անդամների հետ ապաստան գտավ նախ Հայաստանում, ապա Չեչնիայում: Իշխանությունը վերցրեց Ռազմական խորհուրդը (Ջաբա Իոսելիանի, Թենգիզ Կիտովանի): Դեկտեմբերի և հունվարի թբիլիսյան իրադարձությունները շատ վրացիների կյանք խլեցին: Ռազմական հեղաշրջումը երկրում քաղաքացիական պատերազմ հրահրեց:

Աղբյուր.

Վաչնաձե, Մ. և Գուրուլի, Վ. (2004) Վրաստանի պատմություն, Թբիլիսի. «Արթանուջի» հրատարակչություն, էջ 175-176:

Աղբյուր Բ

«Նորագույն պատմություն», 12-րդ դասարանի դասագիրք

1991 թ. օգոստոսի մոսկովյան պուտչից հետո նախատեսվում էր Վրաստանի ազգային կառավարության ստիպողական տապալումը: 1991 թ. դեկտեմբերի 22-ին ընդդիմության ուժերը Վրաստանում տեղակայված ռուսական զորքերի օժանդակությամբ և օգնությամբ հարձակվեցին Խորհրդարանի շենքի վրա: Մինչև 1992 թ. հունվարի 6-ը Թբիլիսիում մարտեր էին ընթանում ընդդիմության և նախագահ Զվիադ Գամսախուրդիայի կողմնակիցների միջև Վրաստանի Կառավարության շենքի մոտակայքում: [...]

1991 թ. դեկտեմբերին և 1992-ի հունվարին Թբիլիսիի օրինական կառավարությունը տապալվեց ռազմական ուժով: Ռազմական հեղաշրջումը երկրում քաղաքացիական բախումներ առաջացրեց: Աքսորված Զվիադ Գամսախուրդիայի կողմնակիցները շարունակեցին պայքարել:

Աղբյուր

Աբդալաձե, Գ., Կվիթաիշբիլի, Ն., Կուփաթաձե, Բ. և Ջանուաշվիլի, Կ. (2008) Նորագույն պատմություն, Թբիլիսի. «Georgia Matsne» հրատարակչություն, էջ 291-292:

Աղբյուր Գ

12-րդ դասարանի պատմության դասագիրք

Օգոստոսյան պուտչից [1991 թ., Ռուսաստան] հետո վրացական կառավարության և ընդդիմության հակամարտությունն ուժեղացավ: 1991 թ. սեպտեմբերի 2-ին՝ ամերիկացի կոնգրեսմենների Թբիլիսի կատարած այցի ժամանակ, Ռուսթավելու պողոտայում ցրվեց ընդդիմադիրների հանրահավաքը: Հակակառավարական ելույթները հաճախացան: Երկու կողմերն էլ բարիկադներ կանգնեցրին Ռուսթավելու պողոտայում: 1991 թ. սեպտեմբերի 25-ին մայրաքաղաքում արտակարգ դրություն հայտարարվեց: Իրադարձություններն անկասելի դարձան: Ցույցերը վերածվեցին զինված առճակատման: 1991 թ. դեկտեմբերի 22-ին ընդդիմադիր ուժերը Վրաստանում տեղակայված ռազմաբազաներից ձեռք բերված սարքավորումների և զենքի օգնությամբ սկսեցին հարձակվել Խորհրդարանի շենքի վրա: Ընդդիմության և նախագահ Զվիադ Գամսախուրդիայի կողմնակիցների միջև մարտերը շատ վրացիների կյանք արժեցան: 1992 թ. հունվարի 6-ին Զվիադ Գամսախուրդիան իր աջակիցների հետ լքեց Վրաստանը՝ ապաստանելով նախ Հայաստանում, ապա Չեչնիայում: Օրինական կառավարությունը տապալվեց ռազմական ուժի միջոցով, և Ռազմական խորհուրդը (Ջաբա Իոսելիանի, Թենգիզ Կիտովանի, Թենգիզ Սիգուա) վերցրեց իշխանությունը:

Աղբյուր

Աբդալաձե, Գ., Կուպատաձե, Բ., Ախմեթելի, Ն. և Մուրգլիա, Ն. (2012) Պատմություն. 12-րդ դասարան, Թբիլիսի. «Դիոգենես» հրատարակչություն, էջ 323-324:

Ռազմական հեղաշրջումը երկրում քաղաքացիական պատերազմ հրահրեց: Աքսորված Զվիադ Գամսախուրդիայի կողմնակիցները շարունակում էին պայքարել: Ճգնաժամը շարունակում էր վատթարանալ, ինչը բարենպաստ պայմաններ ստեղծեց աբխազ և օս անջատողականների համար: Վրաց մտավորականությունն առաջարկեց Մոսկվայից բերել Էդուարդ Շևարդնաձեին՝ երկիրը ճգնաժամից դուրս բերելու համար: 1992 թ. մարտին Շևարդնաձեն վերադարձավ Վրաստան: Ռազմական խորհուրդն իշխանությունը հանձնեց Պետական խորհրդին, որի նախագահը Էդուարդ Շևարդնաձեն էր:

Աղբյուր Դ

«Վրաստանի պատմություն», 9-րդ դասարանի դասագիրք

Ռազմական գործողությունը, որը սահմանափակված էր միայն մայրաքաղաքի կենտրոնով, տևեց մի քանի օր: Ավելի քան 100 մարդ սպանվեց, և շուրջ 550-ը վիրավորվեց: Ավերվեցին մի շարք կարևոր շենքեր. Քաշվեթի տաճարը վնասվեց փամփուշտներից, և Մթածմինդայի մի ամբողջ բնակելի հատված այրվեց: Հունվարի 6-ին նախագահը, կառավարության անդամները և իշխող մեծամասնության մի շարք պատգամավորներ լքեցին Թբիլիսին: Թենգիզ Կիտովանիի, Ջաբա Իոսելիանիի և Թենգիզ Սիգուայի Ռազմական խորհուրդը վերցրեց իշխանությունը, նախագահ Զվիադ Գամսախուրդիայի կառավարությունը տապալված հայտարարեց, ցրեց Խորհրդարանը և կասեցրեց Սահմանադրության ընդունումը:

Երկրի նոր ղեկավարները Զվիադ Գամսախուրդիայի կառավարության տապալումը «ժողովրդավարական» և «ժողովրդի հեղափոխություն» էին կոչում: 1992 թ. մարտին Ռազմական խորհուրդը Վրաստան բերեց Էդուարդ Շևարդնաձեին: Նա Վրաստանի կոմունիստական կուսակցության

երկարատև առաջնորդն էր, որը 1985 թ. Խորհրդային Միության արտաքին գործերի նախարար էր նշանակվել: Նա ընտրվեց որպես Վրաստանի պետության ղեկավար:

2005 թ. մարտի 11-ին Վրաստանի Խորհրդարանը 1991 թ. դեկտեմբերի, 1992 թ. հունվարի իրադարձությունները գնահատեց «հակասահմանադրական ռազմական հեղաշրջում»: Ռազմական հեղաշրջումը քաղաքացիական պատերազմի պատճառ դարձավ և մեծ վնաս հասցրեց վրացական պետության վերակառուցման գործընթացին:

Աղբյուր

Ջանելիձե, Օ., Թաբուաշվիլի, Ա., Թավածե, Լ. և Իրեմաշվիլի, Ն. (2012) Վրաստանի պատմություն, Թբիլիսի. «Կիլո» հրատարակչություն, էջ 364:

ՁԵՐ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ

Կարդալ հատվածները և պատասխանել հարցերին.

1. Թվարկե՛ք դասագրքերում ներկայացված ամենակարևոր փաստերը:
2. Ձեր կարծիքով որո՞նք են դասագրքերում բերված գնահատականները և մեկնաբանությունները:
3. Ի՞նչ եք կարծում, արդյո՞ք որոշ տեքստեր կողմնակալ են: Եթե այո, ո՞րն է ամենակողմնակալը: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:

Հիմնական տարեթվեր

1921 – Խորհրդային զորքերը գրավում են Վրաստանը, և հիմնվում է Վրաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը, որը ԽՍՀՄ-ին է միացվում 1922 թ.:

1970-ականներ – Այս տասնամյակում կրկին հայտնվում է վրաց ազգայնականությունը, և ակտիվանում է ազգային-ազատագրական շարժումը: Գլասնոստի և վերակառուցման հետ եկան անկախության կոչերը:

1989 թ. ապրիլի 9 – Ապրիլի 9-ի ողբերգությունը, երբ խորհրդային զորքերը գազով ու զենքով ճնշեցին հակախորհրդային, անկախական հանրահավաքը Թբիլիսիում:

1991 թ. ապրիլի 9 – Վրաստանի Գերագույն խորհուրդը միաձայն ընդունում է Անկախության հռչակագիրը Ապրիլի 9-ի ողբերգության երկրորդ տարելիցին: Զվիադ Գամսախուրդիան դառնում է անկախ երկրի առաջին նախագահը:

1991 թ. օգոստոսի 18 – Գամսախուրդիայի հանդեպ դժգոհության առաջին նշաններն ակնհայտ են դառնում, երբ Նախարարների խորհրդի նախագահ Թենգիզ Սիգուան և արտաքին գործերի նախարար Գեորգի Խոստարիան հրաժարական են տալիս՝ միանալու ընդդիմությանը:

1991 թ. սեպտեմբերի 2 – Ձաբա Իոսելիանիի բանտարկության դեմ պայքարող ցուցարարները, որոնց կազմակերպել էր Ազգային ժողովրդավարական կուսակցությունը, կենտրոնական Թբիլիսիի Ռուսթավելու արձանի մոտ բախվում են ներքին գործերի նախարարության ուժերի հետ: Երեք մարդ վիրավորվել է գնդակից: Հակակառավարական տրամադրությունները սրվում են:

1991 թ. սեպտեմբերի 11 – 27 քաղաքական կուսակցություն, որոնք նախկինում իրար դեմ էին, միավորվում են Գամսախուրդիային հեռացնելու միասնական պահանջով:

1991 թ. դեկտեմբերի 22 – Սկսվում է երկու շաբաթ տևողությամբ Վրացական հեղաշրջումը:

1992 թ. հունվարի 6 – Հեղաշրջումն ավարտվում է Գամսախուրդիայի՝ զրահամեքենայով Չեչնիա փախուստով: Պատերազմի ընթացքում մահանում է 107 մարդ, և վիրավորվում՝ 527-ը: Ռազմական խորհուրդը ժամանակավոր կառավարություն է ձևավորում Սիգուայի գլխավորությամբ:

1992 թ. մարտի 10 – Խորհրդային Միության արտաքին գործերի նախարար Էդուարդ Շևարդնաձեն Պետական խորհուրդը ղեկավարելու հրավեր ստանալուց հետո ժամանում է Վրաստան: Մոտավորապես նույն ժամանակահատվածում Գամսախուրդիան վերադառնում է Վրաստան և իշխանության վերադառնալու անհաջող փորձ կատարում:

1993 թ. դեկտեմբերի 31 – Գամսախուրդիային գտնում են մահացած խորհրդավոր հանգամանքներում: Թե կոնկրետ ինչպես է նա մահացել, կամ ով է նրան սպանել, մինչ օրս վիճաբանության առարկա է: